



# ՄԱՆԿԱԿԱՆԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

20 ՓԵՏՐՎԱՐԻ  
2024 թ.  
№ 3 (1119)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին  
Երկշաբաթաբեր • Իրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐԻՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

## Պաշտոնական այց Հունգարիա



Պաշտոնական այցով Հունգարիայում էր Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատրյանի ղեկավարած պատվիրակությունը, որն այցելել է Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարան:

Նախագահի գլխավորած պատվիրակության կազմում էին նաև Մանկավարժական համալսարանի պատվիրակները՝ բուհի ղեկավար Սրբուհի Գևորգյանի գլխավորությամբ:

Համալսարան կատարած այցի շրջանակում տեղի է ունեցել Հայկական պետական մանկավարժական համալսարանի և Բուդապեշտի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի միջև ստորագրված միջազգային համագործակցության վերաբերյալ համաձայնագրում

լրացում կատարելու մասին պայմանագրի ստորագրման արարողությունը: Այն ստորագրել են բուհերի ղեկավարներ Սրբուհի Գևորգյանը և Գեզա Կունինցերը: Հիշեցնենք, որ Խաչատուր Աբովյանի



անվան հայկական պետական մանկավարժական և Բուդապեշտի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանների միջև 2016 թվականին ստորագրվել է երկկողմ համաձայնագիր, որի շրջանակում բուհում պաշտոնապես բացվել է Հայագիտության ամբիոն:

Համագործակցության շրջանակներում ներդրվել են ուսումնական ծրագրեր, իրականացվել փոխայցելություններ և գործընկերության շրջանակներում ներառված այլ ծրագրեր:

Ըստ գործող համաձայնագրի նոր կետի՝ նախատեսվում է ընթացիկ տարում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում հիմնել Հունգարիայի պատմության և մշակույթի կենտրոն: Կենտրոնի բացման վերաբերյալ հայ և հունգարացի գործընկերների համդիպումների ընթացքում քննարկվել են գործընթացային հարցեր:

### Ստեփանոս ՆԱԶԱՐՅԱՆ

#### Մայրենի լեզու

Մայրենի լեզու, մայրենի բարբառ, Ախորժ, ընտանի իմ հոգու համար. Առաջին դու խոսք, ականջիս հասած, Դու սիրո քաղցրիկ առաջին հոդված. Մանկական լեզվիս թոթովանք տկար, Ընչում ես իմ մեջ դու

Միշտ անդադար: Ո՛հ, ինչպես պղտոր էր սրտիս օրը. Երբ պանդուխտ էի օտարի տանը, Եթե հարկ էր ինչ այլազգի լեզվով Իմ միտքը հայտնել օտար բառերով. Որ երբեք սիրելի կարելի չէ ինչ, Որ չայն ողջույնի բնավ իսկ չեն ինչ: Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու, Այդ ինչպես քաղցր հնչում ես դու... Կամիմ ավելի քաջ ծանոթանալ Զո ճոխ զանչերին, հոգով հայանալ. Ասես թե ահա կանչում էին ինչ Պապեր ու հայրեր խոր գերեզմանից: Ընչի՞ր դու, հնչի՞ր այժմ և հավիտյան Մայրենի լեզու, բարբառ սիրելյան, Արի, բարձրացիր հնության փոշուց, Դու իմ հայ լեզու, մոռացված վաղուց: Զգեցիր նոր կյանք

սուրբ գրվածներով  
Որ ամենայն սիրտ վառվի քո սիրով:

## Աշխատաժողով նվիրված մանկավարժական կրթության փոխակերպման հարցերին



Մանկավարժական համալսարանում փետրվարի 19-ին Երազմուս+ ծրագրի շրջանակում տեղի ունեցավ «Մանկավարժական կրթության փոխակերպումը համուն կանաչ և թվային անցման Հայաստանում և Մոլդովայում» T4 GREEN ծրագրի աշխատաժողովը: Ծրագրում ներգրավված է 13 բուհ և կազմակերպություն Հայաստանից և արտերկրից՝ Չեխիա, Իսպանիա, Պորտուգալիա, Մոլդովա և այլն:

Եռամյա ծրագրի համակարգողը Մանկավարժական համալսարանն է. «T4GREEN»-ը միտված է Հայաստանում և Մոլդովայում ուսուցիչների կրթության բարեփոխմանը, ինչը ենթադրում է հանրակրթության ոլորտում անցում կատարել ավանդականից ապագային միտված ուսումնական ծրագրերին՝ աջակցելով դասավանդման մեթոդներին, ազգային նպատակների իրագործմանը, «կանաչ» և թվային ուսուցմանը:

Աշխատաժողովին մասնակցում էին ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը,

փոխնախարար Արաքսիա Սվաշյանը, ՀԴՄՀ ղեկավար Սրբուհի Գևորգյանը, ծրագրի արտասահմանյան գործընկերներ, Մանկավարժական համալսարանի պրոֆեսորները, ղեկավարներ, պրոֆեսորադասախոսական և ուսանողական համակազմի ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ համալսարանի ղեկավար Սրբուհի Գևորգյանը, ով նաև որպես ծրագրի համակարգող բուհի ղեկավար կարևորեց նախաձեռնությունը՝ ընդգծելով, որ բարձրագույն մանկավարժական կրթության խնդիրներն այսօր համայն աշխարհում կարևոր տեղ են զբաղեցնում. օր օրի նկատելի են տեղի ունեցող վերափոխումները, և դրա մասին են վկայում բոլոր այն հարաջույցները, որոնք ներկայացվում են ժամանակակից աշխարհում:

Ուկրաինա խոսքը ծրագրի հիմնական խնդիրների մասին. «դրանք ազգային և ինտերնացիոնալ վարչական աշխատակիցների, որոշումներ կայացնողների, դա-

սախտների, հետազոտողների կարողությունների զարգացման, վերափոխման, մանկավարժական կրթության բազմաբաղադրությունը և ծրագրերը դեպի հանրային, ազգային նպատակների իրագործում՝ կանաչ և թվային անցման աջակցելու ուղղությամբ:

Ուկրաինա ներկայացրեց՝ հատուկ վերափոխման և վերանայման են ենթարկվելու 3 հիմնական ուղղությունների՝ օտար լեզուների, հատուկ մանկավարժության և ներառականության, ԲՏՏՈ ոլորտի բոլոր այն ծրագրային մոտեցումներն ու մեթոդները, որոնց համար անհրաժեշտ է նոր գործիքակազմ ձևավորել: Միաժամանակ խոսեց ակնկալվող արդյունքների մասին՝ 5 բակալավրիական, 5 մագիստրոսական և 2 կարճաժամկետ կրթիտային ծրագրերի վերանայում ժամանակակից չափորոշիչների վրա հենված:

Սրբուհի Գևորգյանը շնորհակալություն հայտնեց բոլոր կոնսորցիում բուհերի ներկայացուցիչներին, որոնք ներգրավվել են ծրագրի աշխատանքներին, որն էլ միտված է ապագայի քաղաքացուն, ապագա կրթությանը՝ Հայաստանի Հանրապետությունում մանկավարժական կրթության բարելավման ուղղությամբ:

ԿԳՄՍ նախարարը շնորհավորեց ներկայներին կարևոր ծրագրի մեկնարկի առիթով:

«Այս պահին ես խոսում եմ և՛ որպես նախարար, և՛ որպես ՀԴՄՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

կարևորելով այն աշխատանքը, որը շարունակությունն է այն ջանքերի, որոնք հետևողականորեն ձգտում ենք մեր երկրում անել արդեն տարիներ շարունակ»:

ԿԳՄՍ նախարարը բարձրաձայնեց՝ խոսքը առաջին հերթին վերաբերում է կրթության ոլորտի այն մեծածավալ բարեփոխումներին, որոնք սկսված են և որոնք, այո, պահանջում են իրենց տրամաբանական արտահայտությունն ունենալ մանկավարժական կրթության հայեցակարգում և բովանդակության մեջ:

Խոսելով մանկավարժական կրթության բարեփոխումների մասին, որը խիստ առանցքային է, նախարարն ընդգծեց՝ դպրոցը փոխվում է, շատ բան փոխվում է, բայց անփոփոխ է մի բան՝ ամենակարևոր մարդը դպրոցում շարունակում է մնալ և մնալու է ուսուցիչը, որի ազդեցությունը երեխաների վրա, կրթական արդյունքի և որակի վրա անզանհատելի է. «Հետևաբար շատ կարևոր է, որ մանկավարժական կրթության որակը և բովանդակությունը լինեն համահունչ ժամանակակից մարտահրավերներին, և զա շարունակելու հանրակրթության ոլորտի բարեփոխումները, որոնք անպայմանորեն պետք է արտացոլվեն նաև ուսուցչական կրթության մեջ»:

Ժամանա Անդրեասյանը շնորհակալություն հայտնեց Մանկավարժական համալսարանին՝ այս կարևոր նախաձեռնության համար, ինչպես նաև ծրագրի գործընկերներին՝ այս ծրագրի կարևորման և աջակցության համար:

# Աշխատաժողով՝ նվիրված մանկավարժական կրթության փոխակերպման հարցերին

Մեծ խոստովանություններով և բարձրագույն կրթության բովանդակության վերափոխումներով, որպեսզի այն դառնա մրցունակ, միջազգայնորեն ճանաչելի և համարժեք:

«Մենք խոսում ենք մի շատ կարևոր ծրագրի մասին, որն իրականացվելու է 5 երկրների գործընկեր բուհերի հետ համագործակցությամբ և Մանկավարժական համալսարանի համակարգում: Սա ի սկզբանե աջակցելու է թե՛ միջազգայնացմանը, թե՛ բարձրագույն կրթության որակական փոփոխությանը, -ասաց նախարարը: - Բարձրագույն կրթության բարեփոխումների առաջնությունը կրթության ոլորտի բարձրագույն կրթությունն ունի առանցքային նշանակություն»:

Նախարարը հատկապես կարևորեց ծրագրի շրջանակներում մշակվելիք մանկավարժական կրթության հայեցակարգը՝ հույս հայտնելով, որ այն կդառնա ուղեւորական փաստաթուղթ ոչ միայն մեր երկրում: Նաև վստահեցրեց՝ մենք հետևողականորեն կհետևենք բոլոր աշխատանքներին, որպեսզի նաև կիրառվող և իրականացվող քաղաքականության մեջ դրանք ունենան իրենց արտացոլումը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը կարևորեց ծրագրի վերջնափուլերը. «Վստահ ենք, որ ծրագրի արդյունքում ձևավորված «պրոդուկտ» կարևոր նշանակություն կունենա մանկավարժական կրթության բարեփոխումների հարցում: Ընթացող բարեփոխումներն ուղղված են թե՛ կրթության բովանդակությանը, թե՛ ուսուցիչների վերապատրաստմանը, թե՛ ենթակառուցվածքների լավարկմանն ու դպրոցի ղեկավարման առաջնորդությանը: Այս ամենը պետք է արտացոլված լինի մանկավարժական կրթության մեջ»:

Նախարարի տեղակալը ընդգծեց՝ մանկավարժությունը մարտահրավերային փուլում է, և տեխնոլոգիական հեղափոխության ժամանակաշրջանում գտնվող սերնդին դասավանդող ուսուցիչը պետք է հասցնի գնալ փոփոխությունների հետևից:

«Կրթության այն ձևը, որով մենք աշխատել ենք տարիներ շարունակ, չնայած



բազմափորձ է և մեծ արդյունքներ է ապահովել, այնուամենայնիվ, ներկայիս տեխնոլոգիական փոփոխությունների ժամանակաշրջանում ստիպված ենք և պարտավոր փոխել կրթական ողջ մոտեցումները ժամանակի կրթական պահանջներին առավել համապատասխան կրթություն ապահովելու տեսանկյունից»,-մշեց նախարարի տեղակալը ու հավելեց՝ ժամանակակից սերունդը պահանջում է, որ մենք փոխենք կրթության ժամանակակից մոտեցումները. գիտելիքի աղբյուրներն այսօր բազմազան են և կարևոր է, որ մենք գիտակցենք երեխաներին ուղղորդելու մեր կարևոր դերը:

Լանա Կարլովան ներկայացրեց կարողությունների զարգացմանը միտված ծրագրերը՝ այս ծրագրով մանկավարժական կրթությունը դիտարկվում է կարևորագույն ոլորտ: Քննարկվում են հիմնահարցեր, որոնք նպաստում են հասարակության կայուն զարգացմանը՝ սահմանված 17 չափորոշիչների հիման վրա: Նման ծրագրերը միտված են իրենց հաջողություններն ու վերջնարդյունքները տեսելու փորձի փոխանակման, որակական շփումների միջոցով:

«Այս ծրագիրը կարևորում է մանկավարժական կրթությունը որպես կարևորագույն ոլորտ: Կարևոր հիմնահարցերի քննարկման համար ներգրավված են ոչ միայն մասնակից բուհերն ու կազմակերպությունները, այլև եվրոպական գործընկերներ՝ որակական փոփոխությունների համար: Լիափոխ ենք, որ այդ փոփոխությունները կանդորադառնան դասավանդման մեթոդաբանության, մանկավարժա-

կան հիմնահարցերի, մասնագետ-մանկավարժների առօրյայի վրա»,-ասաց Լանա Կարլովան՝ հույս հայտնելով, որ ծրագրի մեթոդաբանական և բովանդակային բարեփոխումները տարածվեն կոտնեն ոչ միայն ծրագրի մասնակից բուհերում:

Ծրագրի համակարգող, Մանկավարժական համալսարանի Միջազգային համագործակցության և աշխատակազմի գծով պրոռեկտոր Մարիաննա Չարուբյանը ողջունեց մասնակիցների և ներկայացրեց T4GREEN նախագծի նպատակներն ու խնդիրները: Նա ընդգծեց, որ Մանկավարժական համալսարանը ծրագիրը նպատակ ունի բարեփոխել ուսուցիչների կրթությունը Չայաստանում և Մոլդովայում՝ հնարավորություն տալով անցում կատարել ավանդական դեպի ապագային միտված ուսումնական ծրագրերի և ուսուցման մեթոդների, դեպի հանրակրթության ազգային նպատակների իրագործում՝ կանաչ և թվային անցմանն աջակցելու ուղղությամբ:

Մ. Չարուբյանյանը մանրամասնեց. «Չայաստանի և Մոլդովայի 5 համալսարանում կվերանայվեն STEM, օտար լեզուների և հատուկ և ներառական կրթության, ինչպես նաև գործող ստանդարտների վրա հիմնված ընդհանուր մանկավարժության 2 կարճաժամկետ կրեդիտային ծրագրեր (առկա և նոր մշակված)՝ միտված կանաչ և թվային անցմանը: Կանաչ վիճակագրության կրթության ազգային հայեցակարգ (NCTE) 2027-2035 թթ.» ավանդական դեպի ապագային անցումը խթանելու համար, կմշակվեն ուսուցիչների վերապատրաստման կանաչ և թվային

ուղղվածություն ունեցող ուսումնական ծրագրեր և մեթոդներ, որոնք կարդիակազմեն ուսուցիչների կրթությունը ազգային մակարդակներում՝ նպաստելով ավանդականից անցմանը դեպի կանաչ և թվային ուղղվածությամբ ուսուցիչների վերապատրաստման ուսումնական ծրագրերին և մեթոդներին»:

Պրոռեկտորը անդրադարձավ նաև ազգային և ինտերնացիոնալ վարչական աշխատակիցների, որոշումներ կայացնողների, դասախոսների և հետազոտողների կարողությունների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներին, որոնք ուղղված կլինեն մանկավարժական կրթության քաղաքականության և ծրագրերի վերափոխմանը, դեպի հանրակրթության ազգային նպատակների իրագործմանը՝ կանաչ և թվային անցմանն աջակցելու ուղղությամբ:

Պլենարի նիստին հաջորդեց պանելային քննարկումը՝ «21-րդ դարում ուսուցիչների կրթության հնարավորություններն ու մարտահրավերները» թեմայով: Ակտիվ ու շահագրգիռ քննարկումների ընթացքում մասնակիցներն անդրադարձան տարբեր հիմնախնդիրների, այդ թվում՝ ուսուցչի մասնագիտության կարևորությանը, մարտահրավերներին, կրթության մեջ թվային տեխնոլոգիաների առավելություններին և թերություններին:

Աշխատաժողովի ավարտին համաժողովի մասնակիցները ներկա գտնվեցին Կուլտուրայի ֆակուլտետի ուսանողների մասնակցությամբ կազմակերպված համերգին:

Չամաժողովի հաջորդ օրը Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ աշխատանքային քննարկում, որին մասնակցում էին ծրագրում ներգրավված բուհերի և կազմակերպությունների ներկայացուցիչներ:

T4GREEN ծրագրի համակարգող, ՉՊՄՅ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Չարուբյանյանը հանգամանորեն խոսեց ծրագրերի կառավարման մեթոդների, համակարգման ընթացակարգերի և կոմսորցիոնի համաձայնագրի մասին, որից հետո Կրթական քաղաքականության և կառավարման հայկական կենտրոնի նախագահ Արայիկ Նավոյանը կոմսորցիոնի անդամներին ներկայացրեց ծրագրի իրականացման մշտադիտարկման և որակի ապահովման վերաբերյալ ռազմավարությունը (ՄՈԱՌ):

## Մանկավարժականում էր Ուրալի դաշնային ինստիտուտի պատվիրակությունը



Մանկավարժական համալսարանում փետրվարի 13-ին Բ. Ելցինի անվան Ուրալի դաշնային համալսարանի Չունամիտար ինստիտուտի տնօրեն Էլվիրա Սիմանյուկի գլխավորած պատվիրակությանը ընդունեց ՉՊՄՅ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Չարուբյանյանը: Նա կարևորեց կրթական հաստատությունների արդյունավետ գործընկերությունը, մասնավորապես՝ պատմության ոլորտում, միաժամանակ ընդգծելով, որ պատրաստ են ընդլայնել համագործակցության շրջանակները:

Էլվիրա Սիմանյուկը մշեց, որ նախատեսվում են համագործակցել հոգեբանության, բանասիրության, մանկավարժության ոլորտներում և՛ ակնկալելով հայ գործընկերների աջակցությունը:

Նա ներկայացրեց պատվիրակության անդամներին, ապա խոսեց իրենց ինստիտուտում ռուսաց և օտար լեզուների մանկավարժ կարգի պատրաստման, իրականացվող տարբեր գիտակրթական ծրագրերի, գիտաշափական հայտնի շտեմարաններում ներկայացվող 5 ամսագրի մասին:

Չունամիտար ինստիտուտի տնօրենը ներկայացրեց իր ղեկավարած կառույցի գործունեությունը, ներդրողբանության ոլորտում ունեցած ձեռքբերումները: Նա ցանկություն հայտնեց Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին առաջիկայում տեսնել իրենց ֆո-

րումներում, սիմպոզիումներում, խրախուսել հայ գործընկերների ակտիվ մասնակցությունը:

Ռուս գործընկերը խոսեց մանկավարժական կրթության ոլորտի մասին՝ փաստելով, որ հետ չմնալով կրթական թրեյնդներից՝ պատրաստվում են ներդրել թվային մանկավարժության և կոգնիտիվ տեխնոլոգիաների մագիստրոսական ծրագրեր: Նա առաջարկեց համագործակցել մագիստրոսական համատեղ ծրագրերի իրականացման, պարբերականներում հետազոտական հոդվածների հրատարակման և ուսանողական դպրոցների փախադարձ այցելությունների շուրջ:

«Երբ մենք խոսում ենք մանկավարժ կարգի պատրաստման մասին՝ պետք է հասկանանք՝ ինչ երեխաների հետ գործ ունենք»,-ասաց Էլվիրա Սիմանյուկը՝ փաստելով, որ երեխաների տարիքային հոգեբանության նորմերը հնացած են և պետք է մշակել նորմեր, որոնք համապատասխանեն փոփոխվող աշխարհում փոփոխված երեխաներին: Նա ներկայացրեց այդ ուղղությամբ իրենց բուհում տարվող աշխատանքները՝ միաժամանակ ընդգծելով՝ միայն համատեղ գործունեության արդյունքում կարելի է խոսել գիտական զարգացումների ու առաջընթացի մասին:

ՉՊՄՅ պրոռեկտոր Մարիաննա Չարուբյանյանը ներկա-



յացրեց Մանկավարժական համալսարանի առաջատար մասնագիտությունները, խոսեց ավանդական դարձած ուսանողական «Ամառային» և «Ձմեռային» դպրոցների անցկացման մասին՝ դրանց իրականացման շրջանակում կարևորելով գիտատեսություններ, կրթական բաղադրիչը: Պրոռեկտորը ընդգծեց՝ ՉՊՄՅ-ն ակտիվորեն համագործակցում է ռուսական մի շարք բուհերի հետ: Պատրաստ են խորացնել գործընկերությունը նաև Ուրալի դաշնային համալսարանի հետ:

Կողմերը քննարկեցին հնարավոր համագործակցային ուղղությունները: Երկու բուհերն էլ պատրաստ են դասախոսների և ուսանողների փոխադարձ այցել իրականացնել գիտական ոլորտի տարբեր նախաձեռնությունների շրջանակում:

Պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ՉՊՄՅ Մանկավարժության ամբիոնի, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի, Օտար լեզուների ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի հետ:




- Տիկին Խալաթյան, լավ է, որ Հայաստանում ունենք պետականորեն ընդունված Մայրենի լեզվի օր: Միաժամանակ կարծում եմ՝ մեզանում ամեն օրը պետք է լինի Մայրենիի օր, հասկապես, երբ այսօր մեր լեզուն և ազգային շատ արժեքներ վտանգված են:

- Ազգի պահպանման ու գոյատևման ամենաառաջին երաշխիքը լեզուն է, որը պահում է ազգին, պահում է մեր հայրենիքը: Դարերի պատմություն ունեցող մեր լեզվի մասին ոչ միայն հայ անվանի լեզվաբաններն ու գրականագետներն են կարծիքներ հայտնել: Աճառյան, Իսահակյան, Շիրազ... այլև աշխարհի մեծ ու նշանավոր մարդիկ՝ Բայրոն, Յուզո...

Մի օտարերկրացի, երբ այցելել է Մատենադարան, ասել է՝ գրերը նույնքան արժեք են ունեցել հայ ժողովրդի գոյատևման համար, որքան նրա գինվորներն ու ռազմիկները, իսկ Վիկտոր Յուզոն ասել է. «Ես ձեր լեզվին չեմ տիրապետում, բայց սիրում եմ ձեր լեզուն: Որքան մեջ արևելքն եմ տեսնում, դարերն եմ նշմարում այնտեղ: Ինձ համար մեծ հպարտություն է հայերեն թարգմանվելը»:

Բազմաթիվ մտքեր կարող են մեջբերել, երբ աշխարհի հռչակավոր ու հանրահայտ մարդիկ փառաբանել ու մեծարել են մեր լեզուն: Բայց այսօր մեծ ցավով եմ ուզում խոսել մեր լեզվի ներկա վիճակի մասին, որովհետև խաթարված է մեր լեզվի անաղարտությունը: Մեծ լեզվա-կան վթարներ կան մեր լեզվում, վթարներով, խաթարներով ու սպրդումներով են խոսում ոչ միայն առօրյա կեն-ցաղային խոսքում, վթարներն ամենուր են՝ գրավոր ու բանավոր խոսքում, սոցցանցերում... Շատ ցավալի է լսել



# «Մենք պետք է պայքարենք՝ վերադարձնելու Մայրենի լեզվի մարքայությունն ու արժանապարկությունը», - ասում է Գայանե Խալաթյանը

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» պաշտոնաթերթի հյուրն է մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պաշտոնակատար Գայանե Խալաթյանը

հեռուստատեսությամբ հնչող խոսքը, երբ երբեմն լրագրողը անվանի մարդու հետ զրուցում է վատ հայերենով, ինչն անընդունելի է, այլև վիրավորական: Այդ լեզվական մեղանշումները նկատելի են լեզվի օգտագործման բոլոր ոլորտներում՝ և՛ խնդրառական, և՛ համաձայնության, և՛ քերականական, ոճական բազմաթիվ աղաղակող սխալներ, և՛ բառապաշարի ոչ ճիշտ կիրառություններ... Եվ ամեն քայլափոխի ականջալուր ես լինում այդ ամենին ու չեմ կարողանում պայքարել այդ իրողության դեմ, որովհետև փոխված են մեր կյանքի չափանիշները՝ մեր լեզվի, մեր հայրենիքի նկատմամբ:

**- Տիկին Խալաթյան, այս տեսանկյունից Մայրենի լեզվի օրը ինչ-որ բան տալի՞ս է հասարակությանը:**

-Բոլորովին: Այն հասարակությունը, որը դուրս է «լեզվի օր» կոչված իրողությունից, չի կարող գիտակցել այդ օրվա խորհուրդը: Մենք այդ օրը ուրախ ենք, իրար գրքեր ենք նվիրում, բայց հասարակության 90 տոկոսը գրեթե բացառապես տեղյակ չէ՝ ինչ է տեղի ունենում: Դա պետք է համընթաց լինի, դա պետք է համազգային տոն դառնա, համազգային տոնի վերածով:

**- Միջայել Նալբանդյանն ասել է. «Բավական չէ ազգասեր ու հայրենասեր լինելը, պետք է մի քիչ էլ լեզվասեր լինել, պետք է սիրել, պաշտել, գգվել հարգատ մոր հարգատ լեզուն. այս սերը միայն կբանա մեր առջև մեր լեզվի անհատում ճոխությունը, նրա նրբությունը և քաղցրությունը»:**

**Արդյո՞ք մեր սերունդը հետևում է նալբանդյանական պատվիրանին...**

-Լեզվի հիմքը թերևս նրա բառային համակարգն է, և եթե բառային համակարգը խախտվում է, խախտվում է նրա անրությունը, դա նույնն է, որ շենքից մի հիմնաքար հանես, ու նա կփլվի: Այդպես մեր լեզուն փլուզված է, բոլոր հիմնաքարերը հանված են մեր լեզվի տակից: Նոր սերնդի մոտ լեզուն խաթարվել է, և մեկի մոտ՝ բնավորություն է, մեկի մոտ կենցաղից է բխում, մեկի մոտ՝ անկիրթ լինելուց: Եվ մարդիկ չեն ապրում իրենց մայրենի լեզվով՝ խոսեն իրենց մայրենի լեզվով, պահեն ու փրկեն իրենց մայրենի լեզուն: Բայց մեր լեզուն չի փրկվում և գնալով անդունդներն է ընկնում...

Ես անկեղծորեն ցավ եմ ապրում մեր ազգային մշակույթի, գիր ու գրականության հանդեպ այսօրվա վերաբերմունքից: Ո՛ր ենք գնում մենք. եթե լեզուն չեղավ, գիր ու գրականություն չեղավ... Հայաստանի առաջին բաժանման ժամանակ Մաշտոցը զգաց գիր ու գրականություն չունենալու հետևանքները, հասկացավ դրա անհրաժեշտությունը և ստեղծեց հայոց տառերը: Իզուր չէ, որ հետագայում Հովհաննես Շիրազն ասաց՝ այդ 36 տառերը մեզ փրկող թերեմ էին, Լյուդվիգ Դուրյանն էլ իր «Մաշ-

տոց» պոեմում գրել է. «36 զինվորները մեզ փրկեցին, եկանք հասանք քաղաքակրթությանը, բայց այդ զինվորներն այլևս մեզ չեն փրկում...» Տեսե՞ք՝ դարերի խորքից եկան մեր տառ-զինվորները մեզ փրկեցին, իսկ մենք ի՞նչ ենք անում...

**-Մեր օրերում անհնար է առանց օտար լեզուների տիրապետելու առաջընթաց ունենալ, հաղորդակցվել աշխարհի զարգացումներին: Բայց լեզուներ սովորելը չպետք է անել Մայրենի լեզվի հաշվին: Դա մեզանում օտարամոլություն է... Ինչպե՞ս պետք է դիմակայել այդ երևույթին:**

Բայրոնը շատ հստակ է ձևակերպել. «Շատ լեզուների իմացությամբ հպարտանալու իրավունք չունի նա, ով չգիտի իր մայրենին...»:

-Լրիվ համաձայն եմ. եթե մարդ իր լեզվին չի տիրապետում, այլև մեր հասարակության մեջ ընդունված է անգլերենամոլությունը իրենց լավ են զգում, երբ անգլերենին տիրապետում են, երբեմն իրենց լեզվում օտար բառեր են օգտագործում և հպարտանում են դրանով: Իսկ մայրենի լեզուն... Ով չի սիրում իր մայրենի լեզուն, նա չի սիրում իր հայրենիքը, նա չի կարող սիրել իր մորը: Ես դրանք հավասարազոր մտարի վրա եմ դնում՝ մայր, լեզու, ազգ, հայրենիք նույն բանն են: Եթե դու լեզուդ չես սիրում՝ չես սիրում քո մորը: Սա օրինաչափություն է ինձ համար:

Երբ բուհական քննությունների ժամանակ հայերենի և անգլերենի միջև ընտրություն է դրվում. դա ամեներևի քայլ է: Մինչդեռ այլ երկրներում առաջին հերթին իրենց մայրենի լեզվով պիտի քննություն հանձնեն, հետո մյուս առարկաները: Մեր լեզուն բարդ է, ծնողներն էլ նախապատվությունը տալիս են անգլերենին, որ երեխան անգլերեն քննություն հանձնի:

Մեր տարիներին պարտադիր էր, որ յուրաքանչյուր հայ մարդ ընդունելության քննության ժամանակ իր մայրենի լեզվով հանձնի գրավոր քննություն, որը նրան զգոն էր պահում: Այդ համարաբար հիմա չի գործում: Մենք այդ հարցը բազմիցս բարձրացրել ենք: Երբ մոր էի աշխատում բուհում՝ ընտրագույն ուսանողներ ունեինք, մաթեմատիկայի ֆակուլտետում մաթեմատիկային, ֆիզիկային հավասարազոր հայերեն գիտեին. հիանում էի նրանցով: Այսօր ինչպիսին կարող է լինել դիմորդը, որը 7.5-ի շեմն է հաղթահարում և դառնում ուսանող:

**-Որպես հայոց լեզվի դասավանդման երկարամյա փորձ ունեցող դասախոս՝ կներկայացնե՞ք ինչպե՞ս եք ուսանող երիտասարդությանը սիրել տալիս մեր լեզուն, ի՞նչ մեթոդներ ու մեխանիզմներ եք կիրառում, և դա ձեզ հաջողվում է:**

-Այո, հաջողվում է: Ես ուսանողին չեմ պարտադրում: Ուսանողի մեջ ես սեր եմ առաջացնում իմ կերպարով, իմ խոսքով, իմ լեզվական, քերականական գիտելիքներով: Այնպիսի հարաբերություններ եմ ստեղծում իմ և ուսանողների միջև, որ նրանք դասախոսին սիրելով՝ սիրեն նաև նրա դասավանդած առարկան: Բազմաթիվ մեթոդներ եմ կիրառում. նրանք իմ դասին այնքան են ոգևորվում, որ նրանց թվում է, թե դասը շատ արագ անցավ: Դա գալիս է իմ տարիների մանկավարժական մեթոդիկա ստեղծելու հնարներից, փորձառությունից: Իմ տեսակը ես չեմ հակադրում ուսանողներին. թույլ լինի ուսանողը, թե ուժեղ, միևնույն է, այդ մեթոդիկան ես կիրառում եմ, և դա հաջողվում է ինձ:

**-Արևելագետ և ազգագրագետ Նիկողայոս Մառը իր իմացած լեզուների մեջ հայերենը համարել է բացառիկ՝ նկատելով նրա «զարմանալի տրամաբանական լեզու լինելը», նաև՝ «ծկունությունը՝ նոր բառեր կազմելու դյուրություններով»:**

**Ի՞նչ է Ձեզ համար Մայրենի լեզուն: Այլ լեզուների հետ համեմատելիս ինչի՞ն էք տալիս նախապատվությունը:**

-Այլ լեզուներն ունեն իրենց խրթիությունը՝ և՛ հոլովման համակարգում, և՛ բայերում: Իզուր չէ Ավ. Իսահակյանը ասել՝ մեր լեզուն բարձր լեզուներից ու խորունկ ծորերից ծնած լեզու է, բարձունքների և խորությունների լեզու է՝ և՛ իր խորքայնությամբ, և՛ իր դժվարություններով: Մեր լեզուն և՛ պարզ է, և՛ բարդ, և՛ զուլալ է, և՛ հարուստ ու շքեղ: Իզուր չէ, որ մեր գրաբարը համարվում է ոսկեդենիկ լեզու: Այդ լեզուն մենք պիտի պահենք ու փրկենք: Օտարները այդպես գնահատել են, իսկ մե՞նք...

**-Այսօր լեզվի և գրականության ի՞նչ մակարդակ ունեցող ուսուցիչներ ենք ուղարկում դպրոց: Շատերը մեղադրում են, որ դպրոցից է գալիս այս բացը:**

-Կա ուսուցիչների մի տեսակ, որ բավականին նվիրյալ է, բայց հիմնականում հանրակրթությունն այսօր այն վիճակում չի, ինչ որ եղել է տարիներ առաջ՝ մեր սովորելու տարիներին: Ես երկար տարիներ աշխատել եմ դպրոցում: Հիմա դպրոցը փոխված է. ուսուցիչների մի մասն է, որ նվիրյալ է ու նաև գրագետ: Հիմնականում մասը չի ապահովում այն գիտելիքներն ու կարողությունները և մեթոդապես այնքան պատրաստ չէ, որ կարողանա երեխային գրավել, որ սիրի հայոց լեզվի ուսուցչի կերպարը, նրանով էլ սիրի հայոց լեզուն: Չեմ ուզում մանկավարժին վատաբանել. լուսավոր ու ազգանվեր գործ է մանկավարժի գործը, ազգանվիրությունն այն է, որ մեր երեխաներին դաստիարակի հայեցի, հայկական հոգեբանությամբ: Գործոններ կան ազդող, բայց եթե մարդը նվիրյալ է, պետք է տրվի իր առաքելությանը, ինչպես հեռավոր մութի տարիներին էինք անում:

Մի ժամանակ դպրոցը մեզ համար սրբություն էր, ուսուցիչը՝ անհասանելի կերպար: Ցավով պետք է ասեմ, որ այսօր ուսուցիչն իր կերպարը կորցրել է, և դպրոցն այսքան վատ վիճակում է գտնվում: Ես կարծում եմ անկախ գործոններից, դու պիտի մանկավարժ ծնվես:

**-Լեզվի պահպանման և այս վայրկյաններից փրկելու, անաղարտ պահելու համար ի՞նչ է պետք անել. ի՞նչ խորհուրդ կտայիք ուսանող երիտասարդությանը:**

- Իմ ամեն մի դասը, ամեն շփուլը ուսանողների հետ դա է վկայում: Ամեն օր գոնե մեր բանասեր ուսանողներին փորձում ենք հնարավորինս դաստիարակել այն հոգեբանությամբ, որ զգան հայոց լեզվի և գրականության արժեքը: Գոնե նրանք այս փոքրիկ միջավայրում ստանան այդ գիտելիքը և հասկանան՝ ո՛ր ենք գնում մենք, ո՛ր է գնում մեր ազգը:

Դարերից եկած Հայկի երկիրը, աշխարհը ցնցած հայ արվեստագետներ տված հայ ազգը պիտի գոյատևի իր լեզվով:

**-Ուրիշ ինչի՞ մասին կուզեիք խոսել:**

-Կուզեի, որ մեր երկրում խաղաղություն լինի, դարերի պատմությունից եկած մեր հզոր երկիրը չկործանվի, որ համախմբվենք, ուժեղանանք, հիշենք Հայկին, Տիգրան Մեծին, և սրով կլինի, լեզվով, թե հայրենասիրությամբ, մենք պիտի հաղթենք ու ապրենք, ապրենք ու առարկենք: Առանց հայ ազգի երկիր մուրակի վրա մի տեղ բաց կմնա: Առանց հայ ազգի աշխարհը չի կարող լինել այն, ինչ որ կա հիմա: Որովհետև մեր արվեստն ու մշակույթը աշխարհով մեկ է սփռված, իսկ այն ազգը, որ աշխարհով մեկ սփռված է, պիտի ապրի ու արարի: Մենք պետք է պայքարենք՝ վերադարձնենք մեր լեզվի մաքրությունն ու արժանապատվությունը:

-Շնորհակալություն: Այդ առաքյալներից մեկն էլ դուք եք, ում շնորհիվ նաև պիտի անաղարտ պահենք մեր Մայրենի լեզուն:



Չմնան լիարժեք 9 օր ուսանողների արձակուրդի ժամանակ անցկացրի Կիպրոսում: Վարձած մեքենայով, որը վարում էր աղջիկս, շրջեցինք Կիպրոսի հունական մասում, որը կազմում է կղզու 60 տոկոսը: Բնակվում էինք Լառնակա քաղաքի կենտրոնում գտնվող փողոցի, հարմարավետ հյուրանոցում: Պետք է հասցնեինք հնարավորինս պատմական շատ վայրեր տեսնել: Առաջին հերթին պետք է տեսնեինք այն պատմական հուշարձանները, որոնք գտնվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորության ներքո: Դրանցից առաջինը Քրիստոսի ծնունդից առաջ X հազարամյակի նեոլիտի դարաշրջանի մեծ գյուղն էր՝ Խիրոկիտիա անվանումով: Հնագիտական պեղումներն իրականացվել են ֆրանսիացի գիտնականների ջանքերով, բացվել են գյուղի բնակարան-շինությունների ավերակները, վերականգնվել բնակավայրը շրջափակող պարիսպները, իսկ ավելի հարթ տեղում կառուցվել են նեոլիտի դարաշրջանում կառուցված տների կրկնօրինակները: Դրանք կլոր են, ունեն մեկ դուռ և մի քանի պատուհան՝ օդի ու լույսի համար: Տների տանիքը հարթ է: Արդեն այդ շրջանի մարդիկ ցանել են գարի, ոսպ, կերել պտուղներ, զբաղվել որսով ու օգտագործել են կավե ամանեղեն:

Մեր առաջնակարգ խնդիրներից էր նաև ծանոթանալ հայկական դպրոցին, այցելել Լառնակայի հայկական եկեղեցի, ու անպայման ծաղիկներ դնել հայերի 1915



նաստանի բակում կային պտղատու ծառեր, և մի հրաշք պամելոյի ծառ՝ ծանրաբեռ հսկա առատ պտուղներով: Շատ արևադարձային ու մերձարևադարձային երկրներում են եղել, սակայն պամելոյի ծառ տեսնում էի առաջին անգամ: Ինձ թվաց, թե հեքիաթում եմ:

Չափազանց հետաքրքիր վանական համալիր էր Կիկոսը, որը նույնպես գտնվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո: Այն ուներ շատ հարուստ թանգարան: Այդ թանգարանը եզակի է ու ներկայացնում է Կիպրոսի ողջ պատմական մշակույթը: Թանգարանի եզակի ցուցանմունքները ներկայացվում են հատուկ լուսավորությամբ, նաև հին բյուզանդական երաժշտության ուղեկցությամբ: Այդ թանգարանը հստակ ներկայացնում է Կիպրոսի մշակույթը բյուզանդական ու հետբյուզանդական ժամանակահատվածում:

Գնացինք նաև որոշ հին վանքեր, որոնք լեռների բարձրության վրա են, ինչպես Կիկոսն է, լեռան կատարին: Այդ բոլոր վանքերը լեռներում թվով տասն են, ու բոլորը գտնվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո: Դրանցից մեկը հատկապես ներկայացնում էր հունական եկեղեցական արվեստը XI-XIII-XV դարերում:

Կային գյուղեր, որոնց տները թվում էր թե կախված են օդից, որովհետև կառուցված էին լեռան խիստ թեթևությամբ վրա:

Երևում է զբոսաշրջության եռանդուն շրջանում այդ

# ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԻՊՐՈՍ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ՀԱՐՍՏԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

թվականի ցեղասպանությունը հավերժացնող հուշակոթողին: Երևանում ունի անհամար ծաղիկ կրպակներ, հատուկ խանութներ և ծաղիկների փողոցային վաճառք: Նման բան Լառնակայում չկար: Գտնում ենք մի ծաղիկ խանութ, որտեղ հիմնականում վաճառում են արհեստական ծաղիկներ: Բնական ծաղիկները հատուկ սառնարանում են ու շատ քանակ: Մեկ նարցիսն արժե 2 Եվրո: Խանութի վաճառող երիտասարդ կինը շատ հուզվում է, երբ իմանում է, թե թարմ ծաղիկներ ենք տանելու եղեռնի հուշարձանին դնելու: Նա իր կողմից ավելացնում է մեկ ծաղիկ ևս, ու փունջը կապում է եղեռնը խորհրդանշող անմոռուկի մանուշակագույն ու դեղին ժապավեններով, որպեսզի առավել տպավորիչ լինի ու հրաժեշտից առաջ հայերենով ասում՝ «Աճու՛ր»:

Եղեռնի հուշարձանը գտնվում է քաղաքի ամենաշքեղ Սարինա ծովափնյա փողոցի կենտրոնում: Այն մուգ կարմրագույն գրանիտից կառուցված համալիր է, կենտրոնում՝ արտարկտ ոճով կերտված հուշարձանը: Պատվանդանի վրա անգլերեն, հունարեն, հայերեն ու թուրքերեն գրված է. «Այս հուշարձանը վեր է խոյանում այն վայրում, ուր 1915 թվականի ցեղասպանության կոտորածներից մազապուրծ հազարավոր հայեր առաջին անգամ ոտք դրեցին Կիպրոս: Այն արտահայտում է հայ ազգի երախտագիտությունը Կիպրոսի ժողովրդին իր բարեսիրտության և օգնության համար, այս հուշարձանը հավերժացնում է Մեծ Եղեռնի անթիվ նահատակների հիշատակը»:

Հայկական եկեղեցին բաց էր միայն շաբաթ օրը: Հանդիպեցինք վանահորը, որը մեզ հավաստիացրեց, թե Կիպրոսում ապրող բոլոր հայերը խոսում են հայերեն, հայերեն գրել-կարդալ գիտեն, ու եկեղեցու բոլոր արարողությունները հայերեն են: Եկեղեցին Լառնակայի կենտրոնում է՝ Հայկական եկեղեցի կոչվող փողոցի վրա, իսկ նրա բակում Նարեկ կիրակնօրյա հայկական դպրոցի բարեկարգ շենքն է:

Ընդհանրապես Կիպրոսում հայերի նկատմամբ կար հատուկ հարգանք: Այդ օրերին հանդիպեցինք երեք տեղացի հայ տղամարդկանց, որոնք լսելով մեր հայերեն խոսակցությունը հետաքրքրվեցին, թե որտեղից ենք: Նրանք երեքն էլ շատ ներկայանալի տեսք ունեցող տղամարդիկ էին ու հատուկ ջերմություն ունեին դեպի Երևանը:

Լառնակայի Սարինա ծովափին կա մի թանգարան, որը շատ խոսում է: Նրա պատերին կախված նկարները ներկայացնում են Կիպրոսի շենքերն ու կառույցները, երջանիկ մարդկանց միջև 1974 թվականի Թուրքիայի ագրեսիան և ապա ագրեսիայի հետևանքով առաջացած ավերածությունները: Լառնակայում կա նաև առանձին մեծահարուստ ընտանիքի թանգարան՝ պատմական տարբեր դարաշրջանի առարկաներով:

Ամենամեծ ամրոցը՝ հենց ծովափին, կապվում է Կիպրոսի Լուսինյան թագավորական ընտանիքի հետ:

Ընդհանրապես 14-15-րդ դարերում Կիպրոսը պատկանել է Լուսինյաններին և տարբեր վայրերում կան մի շարք մատուռներ՝ նվիրված նրանց: Նշվում է նաև, թե Լուսինյանները եղել են նաև Կիլիկյան Հայաստանի թագավորներ:

Եղանք մի շարք եկեղեցիներում: Լառնակայի մշակավոր եկեղեցին կապվում է Սուրբ Ղազարոսի անվան հետ և հունական տիպիկ եկեղեցի է:

Հնագիտական շատ կարևոր վայր է Կուրիոնը, որը Լառնակայից բավականին հեռու է: Ծանապարհին՝ Միջերկրական ծովի մեջ, կան գեղատեսիլ ոչ մեծ ժայռեր, որոնք կապվում են հունական դիցաբանության գեղեցկության աստվածուհի Աֆրոդիտեի հետ: Հասնում ենք Կուրիոն հնավայրը, ուր կան հին հունական պալատների ավերակներ՝ շքեղ խճանկար հատակներով: Այդ վայրում առանձնացված են գլադիատորների և Աքիլլեսի տները: Ընդհանրապես Կիպրոս կղզու հունական հնավայրերում բազմաթիվ են բարձրարվեստ խճանկարները, որոնցում հիացնում են գույներն ու մարդկանց մարմինների ու դեմքերի ռեալիստական ոճը: Դրանք՝ բոլորը, ներկայացնում են Հոմերոսի Իլիականի ու Ոդիսականի հերոսներին: Հատկապես հաճախ է պատկերված Աքիլլեսը, որի պաշտամունքը Կիպրոսի հելլենական հնավայրերում խիստ զգալի է: Կուրիոնում հիանալի վերականգնված է ամֆիթատրոնը, որում մեր թվարկությունից առաջ բեմադրվել են հունական ողբերգություններ ու կատակերգություններ: Ինչպես Հունաստանի հռչակավոր Եպիդավրոս թատրոնում, այստեղ էլ բեմում արտասանված ոչ բարձրաձայն խոսքը ամֆիթատրոնի վերջին շարքում լսվում է հնչել:

Երկրորդ առավել տպավորիչ հնագիտական վայրը Պաֆոս քաղաքի մոտ գտնվող հնավայրն էր, որի պալատն ահռելի չափերի էր, և այդ հսկա տարածության ողջ հատակը եղել է խճանկարով պատված: Որոշ հատվածներում չքնաղ խճանկարները հիանալի պահպանված են: Չմեռը Կիպրոսում զբոսաշրջության ժամանակ չէ, բայց նախկին հնավայրերում հանդիպում էինք Եվրոպայից եկած սակավաթիվ տուրիստների: Պաֆոսում մի տղամարդ մենակ էր շրջում ու աղջկա դիմեց՝ ասելով «Գամար ջոբա»: Աղջիկս ասաց, որ դա վրացերեն է, իսկ մենք հայեր ենք: Պարզվեց, որ նա Իսրայելից է և հատուկ եկել է հնությունները տեսնելու: Պաֆոսում առանձին սենյակ կար նվիրված Օրփեոսին:

Կիպրոսը լեռնային երկիր է, ծնունդ կղզին կանաչի ու ծաղկունքի մեջ է: Ամենուր մանդարինի, նարինջի, կիտրոնի պլանտացիաներ են՝ մրգերով ծանրաբեռ: Քանի որ մենք մեքենայով անցանք հունական Կիպրոսի բոլոր կողմերով, ապա տեսանք գյուղատնտեսական աշխատանքներ, մեր անցած գյուղերն ավելի շուտ մնան էին քաղաքատիպ ավանների: Լեռնային որոշ գյուղերում կային մշակավոր վանքեր: Շատ հետաքրքիր էր Մինաս կանանց մենաստանը, որը շատ խնամված էր: Մե-

գյուղերում շատ այցելուներ են լինում, որովհետև կային հյուրանոցներ ու մեծաքանակ սրճարաններ ու ռեստորաններ: Անգլերենով խոսում էին շատերը, որովհետև մինչև անկախացումը Կիպրոսը եղել է Միացյալ թագավորության գաղութը:

Շատ գեղեցիկ քաղաք էր Լիմասոլը, որը երկրի ամենակարևոր հանգստյան գոտին ունի և ժամանակակից ոճով կառուցված շքեղ քաղաք է:

Կիպրոսի մայրաքաղաքը Նիկոսիան է, որը կոչվում է նաև Լեֆկոսիա: Այն շատ տխուր տեսք ունի: Բաժանված էր հունական ու թուրքական մասերի, ու հունական մասում շատ թուրքեր կային, որոնք իրենց զգում էին արտոնյալ: Կիպրոսի քարտեզի վրա, որ հրատարակել են հույները, երկրի թուրքական մասի վրա գրված է «Area under Turkish Occupation since 1974» («Թուրքական նվաճման տակ գտնվող շրջան՝ 1974-ից»):

Թուրքական մասում կան շատ քրիստոնեական հնություններ, սակայն Հայաստանի անձնագրով չես կարող անցնել անգլիացիների զինվորական ուժով հսկվող սահմանը: Ամիրաժեշտ է ունենալ Թուրքիա մտնելու արտոնագիր:

Լառնակայի միջազգային օդանավակայանը շատ մոտ է քաղաքին: Դեպի քաղաք տանող ճանապարհի երկու կողմերում կան աղի ջրով մեծ ոչ խոր լճեր, որոնցում կան բազմաքանակ ֆլամինգոներ: Լճերի շրջապատը դրանց դիտելու համար հատուկ հարմարեցված է: Լճի ափին կա նաև մզկիթ, որում թաղված է Մուհամեդ մարգարեի հարազատ հորաքույրը: Նրա դամբարանը սպիտակ մարմարից է՝ արաբական ոճով: Մուհամեդ մարգարեի հորաքույրն այդ վայրում ընկել է ջրում վրայից ու մահացել: Մզկիթի շրջապատն առանձնապես խնամված էր, այն լիքն էր չաղիկ բազմազույն կատուներով: Մենք ոտաբորիկ, սակայն գլխաբաց, մտնում ենք մզկիթ, մեր հետևից մտնում են երեք տղամարդիկ, որոնք սակայն մեզ դիտողություն չեն անում գլխաբաց լինելու համար:

Մի երևույթ խիստ ազդել է մեզ վրա: Երբ մոտենում էինք Նիկոսիա մայրաքաղաքին, լեռան վրա հսկայական չափերով Թուրքիայի դրոշմ էր: Գիշերը, երբ մենք վերադառնում էինք Լառնակա, այս հսկա դրոշմ լուսավորվում էր տարբեր գույնի լույսերով: Հասկանալի էր, թե ինչու հունական մասի բնակիչները ճնշված էին:

Հունական ուտելիքը բազմազան էր ու համեղ:

Կիպրոսում սպասարկող մարդիկ հույներ չէին, այլ աշխատանք ունենալու համար եկել էին տարբեր երկրներից: Բոլոր դեպքերում Միջերկրական ծովի երրորդ ամենամեծ և ամենախիտ բնակեցված կղզին հետաքրքրասեր մարդու համար ունի շատ տեսարժան վայրեր:



# ՀՈՎՀԱՆՆԵԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ

□ Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու երկրան ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու համաճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարհական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հեզեբանությունը:

□ Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը՝ դպրոցի բովանդակությունը:

□ Չեքիաթները անդունդներ են՝ խորը, անձայր, անվերջ հարուստ ու շքեղ աշխարհ: Չեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է, նույնիսկ համաճարները հեքիաթներ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում:

□ Գեղեցկություն, բարություն, ճշմարտություն, սրանք են կյանքում հիմնականը: Մեծ գաղափարները մարդկանց մեծացնում են, զորացնում, ազնվացնում են... Բայց դրա համար պետք է մարդու գլուխը էնքան մեծ ու բանական լինի, որ մի մեծ գաղափար մտնի նրա մեջ ու մերկի: Դժբախտաբար մեծ մասամբ էդպես չի լինում, գաղափարը չի մտնում գլխի մեջ, այլ գլուխն է մտնում գաղափարի մեջ...

□ Զգիտեմք ինչի հավատանք, ինչ սիրեմք, ինչ ցանկանանք, տարուբերվում ենք մի մեծ վարանքի մեջ, բարոյական մի անեզր ալեկոծության մեջ, նավահանգիստ չենք հասնում, փարոս չենք տեսնում, և մեր բոլոր մխիթարությունն այն է, որ ազնիվ են մեր տանջանքները:

□ Ուրիշ ընդհանուր հանգամանքների հետ զարհուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմությունը: Նա երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողովուրդների ոտների տակ: Իսկ ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնանում ու փչանում: Եսպես է բնության օրենքը: Եվ էս տեսակ կյանքը կունենա, այո՛, շատ բան, և՛ «հառաջադիմություն» և՛ «կուլտուրա», և՛ «մամուլ» և՛ «գրականություն», և՛ «դպրոց», և՛ «բարեգործություն», բայց էդ բոլորը ներսից ճիճվի կերած պտուղի նման են, և տառապում են հիմնական պակասություններով, մի ընդհանուր ցավով, որի ճարը դրսից անել չի կարելի: Էդ տեսակ կյանքը կտա և տաղանդավոր մարդիկ, սակայն նրանք էլ կլինեն դառն ու դաժան: Բայց նա չի կարող ծնել ազնիվ մարդիկ, բարի սրտեր ու բարձր ոգիներ, հենց է՛ն, ինչ որ դարձնում է մի կյանք գեղեցիկ ու հրապուրիչ՝ մի ժողովուրդ թանկ ու համակրելի... Ուրիշ ճանապարհ չկա, ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած:

Խավարն ու ետամնացությունը հեշտ է փարատել լուսով ու հառաջադիմությունով, բայց չարությունը դժվար է փոխել բարության:

□ Այսբան դարեր ապրած, ծերացած ժողովուրդ և դեռ չի ըմբռնել կյանքի ներքին իմաստը, անցել է անթիվ ու անհամար փորձերի ու փորձությունների միջով և չի հասկացել, խորանուխ չի եղել, եզրակացություններ չի դուրս բերել այդ փորձերից, չի ստեղծել մի անհատական-զուտ ազգային օրենք...



□...Պատմությունը նրա համար է, որ մենք բան սովորենք: Վերջապես լուսավորություն, արվեստներն ու գիտություններն էլ նրա համար են, որ մենք ավելի մարդասեր դառնանք, ավելի լայն նայենք մարդկանց ու աշխարհին:

## Սերունդների հանդիպում

Երևանի Գագիկ Ստեփանյանի N 135 հիմնական դպրոցը պարբերաբար հանդես է գալիս կրթամշակութային նախաձեռնություններով՝ ընդգրկելով ոչ միայն աշակերտներին, այլև համադրելով տարբեր սերունդների համագործակցությունը: «Լուսավ ծոր» հայրենակցական միության հետ համատեղ ման մի նախաձեռնությամբ խորհրդանշվեց փետրվարի 19-ը՝ Գիրք նվիրելու



կրկին ընթերցել ու հասկանալ պատմական անցյալը, երբ Անդրկովկասում ամենուր տիրապետող դիրքեր էին գրավում հայերը, այդ թվում և Ապշերոնյան թերակղզում՝ Լիանոզովները, Մանթաշյանցները, Արամյանները, Միրզոևները, Քալանթարովները...»,- գրքի «Առաջաբանի փոխարեն» հատվածում գրում է պատասխանատու խմբագիր Սերգո Երիցյանը:

Օրը առավել տպավորիչ էր հետաքրքիր ելույթներով և նոր սերունդն ուղղված ուղերձներով, գրքի տոնով, թունամյանական «խորին խորհուրդներով» ու Սերգո Երիցյանի կերպարի, թողած գրական-հետազոտական հարուստ ժառանգության արժևորումով:

Հայաստանի թեքեյան մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանը խոսեց գրքի, Հարավային Կովկաս 20-ամյա Գալուստ Գյուլբենկյանի ճամփորդության, անցած ճանապարհի ու նրա նկարագրի մասին՝ աշակերտներին խորհուրդ տալով հարուստ մարդու մասին իրենց պատկերացումները վերաժառել ըստ Գալուստ Գյուլբենկյանի, ուսումնասիրել այն անհատականության կյանքի օրինակը, որը խելքի ճկունության և ազնիվ գործելակերպի շնորհիվ հասավ առավելագույնին:

Սերգո Երիցյանի շնորհիվ հայ մեծախառն ստի և բարերարի ճամփորդական հուշերը այսուհետև դարձավ հայ հանրության սեփականությունը, և ինչպես նշեց Ռուբեն Միրզախանյանը՝ դա Սերգո Երիցյանի, գիտնականի, մարդու դրսևորումն էր. «Չլինե՞ր Սերգո Երիցյանը, չլինե՞ր այս գիրքը՝ չլինե՞ր ինչի բազմաթիվ ուսումնասիրություններ՝ մեզ բոլորիս անհրաժեշտ ու պետքական»:

Սերգո Երիցյան գիտնականի, հետազոտողի ու լրագրողի վառ ու պրպտուն անհատականության ու Գալուստ Ս. Գյուլբենկյանի «ԱՆՐԿՎՈՎՎԱՍԸ ԵՎ ԱՊՇԵՐՈՆՅԱՆ ԹԵՐԱԿՂԶԻՆ: ՃԱՍՓՈՐԴԱԿԱՆ ՀՈՒՇԵՐ» գրքի մասին խոսեց գրականագետ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարլեն Մատինյանը՝ ընդգծելով Գյուլբենկյանի կերպարը՝ կրթությունը նյութականից բարձր դասելու տեսանկյունից:

Երևանի Գագիկ Ստեփանյանի N 135 հիմնական դպրոցի կառավարման խորհրդի նախագահ, փիլիսոփայական գիտությունների թեքնածու, դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը մշտապես զարմացել է Սերգո Երիցյանի աշխատելու եռանդից. ե-«Բազմատաղանդ անձնավորություն էր. ինչով էլ զբաղվե՛ր՝ հասցնում էր գործը մինչև վերջ, և հոգու խորքում մա թունամյանական արժեքների մեծ կրող էր: Կյանքի վերջին տարիներին, զգալով, որ գալու է արժեքների դեզարդացիա, նա հայացքը ուղղեց ոչ հեռու անցյալին՝ 19-20-րդ դարերի մեր պատմությանը, և այնտեղ պեղեց, գտավ մեծամուն մարդկանց, որոնց շնորհիվ էլ տիրում էր համաշխարհարային մակարդակի վրա կարևոր երևույթ է»:

Բանախոսը երեխաներին խորհուրդ տվեց շատ կարող և կարող խելացի գրքեր, ունենալ մեր պատմության մեծերի կյանքի օրինակը, ինչպիսին էր Գալուստ Գյուլբենկյանը, որը 20 տարեկանում գրեց իր ճամփորդական հուշերը՝ ունենալով փայլուն գիտելիքներ երկրաբանությունից, ճարտարագիտությունից, քաղաքականությունից, որոնց շնորհիվ էլ տիրում էր համաշխարհարային մակարդակի վրա կարևորության 5 տոկոսին:

Դպրոցականները ներկայացրին մեծ գործարարի ու բարերարի կյանքի ու գործունեության տարբեր դրվագներ:

Նախաձեռնությունն ամփոփվեց դպրոցի տնօրեն և «Լուսավ ծոր» հայրենակցական միության նախագահ Գարեգին Ներսեսյանի ելույթով ու թունամյանական խորախորհուրդ քառյակներով:



օրը և Մեծ լոռեցու՝ Հովհաննես Թունամյանի ծննդյան 155-ամյակը:

Պատահական չէր, որ նախաձեռնությունը մեկնարկեց գրքի շնորհանդեսով. բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Մանկավարժական համալսարանում երկար տարիներ դասավանդած, երջանկալի շատակ Սերգո Երիցյանի խմբագրությամբ առաջին անգամ հայերենով ընթերցողի սեղանին դրվեց մեծահամբավ բարերար Գալուստ Ս. Գյուլբենկյանի «ԱՆՐԿՎՈՎՎԱՍԸ ԵՎ ԱՊՇԵՐՈՆՅԱՆ ԹԵՐԱԿՂԶԻՆ: ՃԱՍՓՈՐԴԱԿԱՆ ՀՈՒՇԵՐ» գիրքը, որը ֆրանսերենից թարգմանել է Դոնաթա Ղազարյանը: Գիրքը հրատարակել է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը:

Ճամփորդական հուշերի տեսքով գրված գրքում Գալուստ Գյուլբենկյանը ներկայացրել է Անդրկովկասը՝ «իր պատմական անցյալով, 19-րդ դարի 80-ական թվականների իրավիճակով, սոցիալ-տնտեսական զարգացումներով, ինչպես նաև այդ տարածքներում ապրող ժողովուրդների ու բնակչության նկարագրով»: Եվ հատկապես բժախնդրությամբ է ներկայացրել նավթագործական Ապշերոնյան թերակղզին:

«...Եվ, երևի, իր այդ ծանոթությունը Ապշերոնյան թերակղզու նավթահանքերի հետ պիտի ճակատագրական դառնար Գալուստ Գյուլբենկյան գործարարի համար, որը, հասկանալով նավթարդյունաբերության առանձնահատկությունները, հնարավորությունները և անգամ գաղտնիքները, պիտի կարողանար լուրջ ներկայություն և ազդեցություն ունենալ համաշխարհային նավթարդյունաբերության ասպարեզում՝ հռչակվելով «Պարոն 5 տոկոս»,- գրում է Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանը:

«...Ընտրելով ճամփորդական ակնարկի տարբերակը, Գալուստ Գյուլբենկյանը ստեղծել է պատմությունների շարք, որոնք կարծես սահուն են աչքերիդ առջևով՝ կինոժապավենի տեսքով, ինչը այնքան տպավորիչ ու ազդեցիկ է, որ ուզում ես կրկին ու

## Հանդիպումներ Բեյրութում

Վաչե Պարտիզուհու անվան հայ մոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն Սուրեն Դանիելյանը փետրվարի 15-17-ը Բեյրութում էր՝ մասնակցելու աստվածաբան, Արաբական ծոցի երկրների աստվածաշախին ընկերության ընդհանուր քարտուղար, դոկտոր Հրայր Եսայանի «Հայկական ազ-



գագրական պատկերներ՝ տեսիլք, կամք և հույս» գրքի շնորհանդեսին:

Պրոֆեսորը Հրայր և Արտա Եսայանների հետ այցելեց նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Առաջինին: Հանդիպման ընթացքում խոսակցություն ծավալվեց Հայաստանի ներկա վիճակի, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների, գրական-մշակութային մարտահրավերների մասին:

Սուրեն Դանիելյանը Վեհափառին նվիրեց իր հեղինակած՝ «Օշականի ստեղծագործական հիմնախնդիրները. մեկնություն և «մանրուքներ» գիրքը:

ՀՊՄՀ պրոֆեսորը հանդիպեց նաև Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Տեր Շահե արք. Փառնոսյանին, հյուրընկալվեց «Ազգակ» օրաթերթի խմբագրատանը, հանդիպեց խմբագիր Շահան Գանտահարյանին: Խոսակցություն ծավալվեց «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի աշխատանքների, սփյուռքահայ գրականության այսօրվա վիճակի, արևմտահայերենի պահպանության, արևմտահայերենով լույս տեսնող մամուլի հարցերի, ինչպես նաև «Ազգակ»-ի դերակատարության շուրջ:

# Քաջալերելու, գուրեպնդելու և համախումբ լինելու հորդորով



Սկզբնական կրթության ֆակուլտետի հյուրն էր «Դանիական-հայկական բարեգործական առաքելություն» հիմնադրամի գործադիր տնօրեն, Պարոյր Գալստյան հոգևոր ճեմարանի դասախոս, աստվածաբան, գրող Արշավիր Գաբունյանը: Բացառիկ հայ մարդ, գիտնական, հոգևորական, գրող. այսպես ներկայացրեց Արշավիր Գաբունյանին բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Տեր-Գրիգորյանը: Հանդիպմանը մասնակցում էին 3-րդ, 4-րդ կուրսերի ուսանողներ և մագիստրոսներ, որոնց թվում շատ էին արցախցի ուսանողները: Հյուրին ողջունեց ֆակուլտետի ղեկան Չեղինե Խաչատրյանը. նա կարևորեց հանդիպումը՝ ընդգծելով, որ հայր Արշավիրը հանդես կգա դասախոսությամբ, որի մեթոդը ուղերձները կհետաքրքրեն ուսանողներին և կօգնեն արցախահայ ուսանողներին՝ հաղթահարելու դժվարություններն ու ստեղծված իրավիճակը:

Հայր Արշավիրի բազմաբնույթ և բազմապլան գործունեությանն անդրադարձավ դոցենտ Լիլիթ Տեր-Գրիգորյանը՝ փաստելով, որ նա հեղինակել է բազմաթիվ աստվածաբանական գիտական աշխատություններ, կրոնի դասագրքերի շարքեր, գրական ժողովածուներ: «Նրա առաքելությունն ուղղված է մի նպատակի՝ Աստծո խոսքը հայ մարդու հոգուն և մտքին հասցնելուն»:

«Աստծո և մարդու կապը,- Արշավիր



Գաբունյանից մեջքերեց Լ.Տեր-Գրիգորյանը,- ունի երեք ուղղություն՝ ներհայեցողական, ուղղահայց՝ մարդ-Աստված հարաբերությունները, և հորիզոնական՝ մարդ-մարդ հարաբերությունները»: Եվ օրվա հանդիպումը գնահատեց որպես Արշավիր Գաբունյանի՝ մարդ-մարդ հարաբերություններում իր առաքելության պարզ իրագործում. այն արձագանքն էր ամիսներ առաջ Վազգենյան հոգևոր դպրանոցում իր և արցախցի ուսանողների կարճատև հանդիպման, որի ժամանակ զգացել էր նրանց հետ արդեն Մանկավարժական համալսարանում հանդիպելու անհրաժեշտությունը: Հենց իր նախաձեռնությամբ ու ցանկությամբ՝ եկել էր նրանց քաջալերելու, գուրեպնդելու և համախումբ լինելու հորդորով:

կենդանի մնաց՝ Աստծո խոսքը և Երուսաղեմ վերադարձի տեսիլքը»,-նշեց հայր Արշավիրը: Վերջինս դիմեց արցախահայերին և հորդորեց երբևէ չկորցնել բարբառը, ինքնությունն ու համախումբ ապրել. դա վերադարձի միակ երաշխիքն է. «Մենք մոռանում ենք այն խոստումը, որ մեզ տրված է. Արցախը մերն է, որտեղ հայը 5000-ամյա պատմություն է կերտել: Իսրայելի ժողովուրդը 40 տարի թափառեց անապատում, բայց վերադարձավ իր հայրենիք: Սաղմոսը նաև մխիթարություն ու քաջալերություն է բերել բոլոր նրանց, ովքեր հավատացին իրենց Աստծուն»,- նշեց նա:

Սաղմոսի ելույթում մեկնելով ուսանողների համար՝ հյուրը փաստեց՝ սա այսօրվան համահունչ Սաղմոս է, պետք է ապավինենք Աստծուն և մեզ:

Դասախոսության ավարտին ուսանողները հարցեր ուղղեցին բանասիրին, ապա գիրք նվիրելու օրվա խորհրդով նրան նվիրեցին Սաթի Վարդանյանի «Հիսուս Քրիստոսի կերպարը XX դարի և արդի հայ արվեստում» գիրքը:

Սիլվա ԱՄՐՅԱՆ



## Հանդիպում պիմվորների հետ



Մանկավարժական համալսարանի Ուսանողական խորհրդի անդամները կառույցի ղեկավար Պարոյր Գալստյանի հետ նախաձեռնեցին այց ՀՀ ՊՆ Ն գործառնա՝ նորաբաց գրադարանին գրքեր նվիրաբերելու: Ուսանողների և համալսարանի գրադարանի կողմից ութ տասնյակից ավելի գրքեր նվիրեցին զինվորական գրադարանին, ապա գրուցեցին զինվորների հետ կրթական ոլորտի տարբեր հարցերի շուրջ, միաժամանակ նրանց ծանոթացնելով համալսարանի մասնա-

գիտություններին: Այս գործառնաում է ծառայում նաև ՀՀ ՊՆ Կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսորայի բաժնի ուսանող Ռուբեն Խաչատրյանը, ով նաև համագործակցության շրջանակում կապող օղակ է դարձել հարազատ բուհի և իր գործառնա միջև: ՈՒՄ Նախագահ Պարոյր Գալստյանը, ով քառօրյա պատերազմի մասնակից է, ծառայողների հետ խոսեց ազգային գաղափարների, հայրենասիրության դրսևորումների, կրթական ոլորտի և Մանկա-

տապնդում: Ուսանողական ակտիվին բարյացակամությամբ ընդունեց սպայական կազմը՝ փաստելով, որ այդպիսի հանդիպումները բարձրացնում են զինվորների ոգին, ձգտումը դեպի կրթությունը, մարդկային հաղորդակցության դրսևորումներով ամրապնդում հասարակության հետ կապն ու ձևավորում ազգային մտածելակերպ:

Ուսանողների և զինծառայողների համագործակցությունը կլինի շարունակական, համատեղ կիրականացվեն տարբեր ծրագրեր՝ ի նպաստ զինծառայողների և հայրենիքի:



Համալսարան-դպրոց

# «Ամեն ճշմարիտ գրող իր ժողովրդի անձնագիրն է...»



Տարին սևակյան է... Լրացավ հայ մեծամուն գրող, բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ Պարույր Սևակի ծննդյան 100-ամյակը: Գրողին նվիրված միջոցառումների մեկնարկը տրվեց նաև մեր կրթօջախում: Հարյուրամյա հոբելյանին նվիրված՝ «Ամեն ճշմարիտ գրող իր ժողովրդի անձնագիրն է...» խորագիրը կրող միջոցառումը եզակի էր իր ընդգրկումն ու մասշտաբային աշխատանքով: Գրական անմախաղեպ ցերեկույթը կայացավ 8-12-րդ դասարանների 65 սովորողների համատեղ ջանքերով: Բացման խոսքում նշեցի. «Սևակն այն եզակիներից է, ում խոսքը բոլոր սերունդների ու բոլոր ժամանակների համար է...»: Սովորողներն իրենց ելույթներում անդրադարձան Սևակ գրողի կյանքին ու ստեղծագործական ուղուն, նրա թողած գրական արժեքավոր ժառանգությանը: Սևակի կերպարը կերտող հերոսի գրասեղանին գրողի տարբեր տարիներին լույս տեսած գրքերն էին, իսկ պատին թերթիկ տեսասահիկը դահլիճ էր ուղարկում գրողի հուշ-նկարները, թևավոր խոսքերը, աֆորիզմները, կարճ ու իմաստալից մտքերը:



Ցերեկույթի ելույթները ջերմ էին ու անմիջական: Գրական միջոցառումն ամբողջացավ ու յուրահատուկ երանգավորում ստացավ Սևակի ստեղծագործությունների ներկայացմամբ: Մեր տաղանդաշատ սանի կատարմամբ հնչեց «Էրեբունի-Երևան» երգը, իսկ աղջիկների չքնաղ պարային կատարումը հիացրեց բոլորին:

Միջոցառումից հետո սովորողները կիսեցին իրենց տպավորությունները... Նրանցից շատերը նոր էին սկսելու ուսումնասիրել և ճանաչել Սևակ գրողին, մյուս սովորողների համար էլ Սևակն արդեն իսկ ամենասիրելի գրողն է:

Խորին շնորհակալությունն են ուզում հայտնել միջոցառման բոլոր մասնակիցներին, ինչպես նաև այն մանկավարժ-գործընկերներին, ովքեր աջակցեցին, խրախուսեցին ու ջանքեր ներդրեցին միջոցառման կայացման համար: Այս միջոցառումը ծնվեց Պարույր Սևակի անձի ու պոեզիայի համոզյալ տածած իմ մեծ սիրուց ու պատ-



կառանքից... Հուսով եմ, որ միջոցառումը բարձրացրեց իրազեկությունը Սևակ-գործի նկատմամբ և դարձավ յուրօրինակ կրթական գործընթաց...

Մեծ բանաստեղծները մտածում են բարձրաձայն կամ խոսում են իրենց իրենց հետ, նրանց լսում է ամբողջ աշխարհը, լսում է ոչ միայն նրանց ժամանակներում, այլև երկրային կյանքին նրանց հրաժեշտ տալուց շատ ու շատ հետո... Կյանքի անարդարություններից դառնացած՝ ձեռքս վերցրի Սևակի ոգեշունչ մարդերգությունը... Ու ինքնամոռաց հափշտակությամբ կլանվեցի մեծն պոետի խորասույզ մտքերում, որոնք գերբնական ուժ և ավյուն ներարկեցին երակներումս ու դարձան մուսա, որպեսզի ապրածս ներշնչանքից ծնվի «Ամեն ճշմարիտ գրող իր ժողովրդի անձնագիրն է...» համադպրոցական բեմադրական միջոցառումը...

Դահլիճում թևածեցին սևակյան խոհերը, երգերն ու բանաստեղծությունները... Փորձել էինք մեծն գրողի ստեղծագործություններից քաղել, ի մի բերել, դասդասել ու առանձին փնջերով ներկայացնել նրա իմաստուն մտքերի խտացումները...

Վստահ եմ՝ ստացվեց... Միջոցառումը ոչ միայն խթանեց սովորողների ստեղծագործական, իմացական և ճանաչողական ներուժը, այլև նպաստեց, որպեսզի սովորողները հետաքրքրվեն և կարևորեն Սևակ գրողի կյանքն ու գործունեությունը: Շատերի համար Նա դարձավ կատարելատիպ, հանճարեղության չափանիշ՝ իր բարոյությամբ ու հակասականությամբ հանդերձ... Ի ուրախություն մեզ՝ ձևավորվեց գրողի ստեղծագործական ժառանգության հանդեպ հպարտություն, ամրակալվեց այն պահպանելու և զարգացնելու ձգտումը... Պետք է դիտարկեն, որ այստեղ կարևոր է ինչպես ուսուցչի, այնպես էլ ընտանիքի դերը... Եվ վերջում ուզում եմ նշել հետևյալը... Թե՛ մեր շնորհալի սաները, թե՛ մենք՝ ներկաներս, դահլիճում վայելեցինք արվեստի հրաշագործ ուժը, որն այնքան մաքրագործող էր ու հոգեպարար...

Էմին ՄԱԼԿԱՎԱՆ  
Աճնա ՄՈՎՍԻՍՅԱՆ  
Երևանի N 108 միջն. դպրոց

## Ավանդական փոների հեպրերով

Հայ երտասարդների, զինվորների և գերիների պաշտպան Սուրբ Սարգսի կարգախոսը. «Խաչը քեզ ողջույն զարկ»:

Սուրբ Սարգիսը հայերի ամենասիրված սրբերից է: Այդ մասին հիշատակվում է նաև Ներսես Շնորհալու՝ քրիստոնեական տոներին և ծեսերին նվիրված «Հայսմավուրք» գրքում: Նրան վերագրվող գործունեությունները կարող են ոչ միայն սիրահարներին միավորել, այլև հիվանդներին բժշկել, հաղթանակ բերել, գերիներին ազատություն պարգևել: Հետաքրքրական է, որ այս տարի Սուրբ Սարգսի տոնը համընկավ Հայոց բանակի օրվա հետ: Ուսուցչական համակազմը շնորհավորեց ՀՀ-ից ժամանած այն զինվորական ընտանիքներին, որոնք ուսանում են ՌԴ-ի Ռազմական ակադեմիայում, իսկ նրանց երեխաները սովորում են «Վերածնունդ» դպրոցում:

Հայ զինվորների սխրանքների մասին խոսվեց նաև հաջորդ դասին՝ նվիրված «Սուրբ Վարդանանց գորավարների և 1036 վկաների» հիշատակության օրվա: Աշակերտները զեկուցումներով ներկայացրին 451 թվականի Ավայարի ճակատամարտը, հայ մեծ գրող Դերենիկ Դեմիրճյանին և նրա «Վարդանանք» պատմավեպը, ինչպես նաև 20-րդ դարի հայ կերպարվեստի առանցքային ստեղծագործություններից մեկի՝ հայ մեծամուն գեղանկարիչ Գրիգոր Խանջյանի կողմից, Ն. Ս. Օ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի աջակցությամբ ստեղծված մոնումենտալ աշխատանքը՝ «Հայոց այբուբեն», «Ավարայրի ճակատամարտ», «Վերածնունդ»:

Այս շարքը եզրափակվեց Բուժ Բարեկենդանի, Տեսողականության (Տրնդեգ) տոներին նվիրված բաց դասերով: Ընթերցվեց Հովհաննես Թումանյանի «Բարեկենդան» հեքիաթը: Աշակերտներն ու ծնողները ծանոթացան համապատասխան ավանդական սեղանին, ծիսական խաղերին, ինչպես նաև ներկայացված տոների

հոգևոր խորհրդին, իմաստին ու արժեքներին, որոնք մեր իմաստուն ժողովուրդը ամփոփել է այդ ամենի մեջ:

«Վերածնունդ» դպրոցի ուսուցչական կազմի նպատակը միշտ եղել է հետևել ազգագրագիտության ոլորտի գիտակների աշխատություններին և նրանց ուսում-

նասիրությունները հնարավորինս կիրառել ուսումնական ծրագրի մեջ՝ փորձելով ապագա սերնդին կերտել որպես այդ անեմի ակտիվ կրողն ու փոխանցողը, թեկուզև մայր հայրենիքի սահմաններից դուրս:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց





# Ամփոփվեց աղավաճորյան հանգստի ծրագիրը

ՀՊՄՀ ուսանողները փետրվարի 1-6-ը ձմեռային ակտիվ հանգիստ անցկացրին Աղավաճորի ուսումնական բազայում: Մանկավարժական համալսարանի ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանն ուսանողներին ճանապարհելիս մաղթեց ուրախ ու հետաքրքիր ընթացք՝ փաստելով,

նաև ուսանողների՝ նոր ու հետաքրքիր գիտելիքներ ու տեղեկություններ ձեռք բերելու մասին հրավիրելով սեմինարավարների: Մանկավարժական համալսարանի կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության ղեկավար Սամվել Ասատրյանի հետ հան-

ՀՊՄՀ արհեստակցական կազմակերպության նախագահ Էդիկ Գուլյանն ինտերակտիվ սեմինարի ընթացքում խոսեց աշխատանքային իրավունքի մասին: Ուսանողները խմբային աշխատանքի միջոցով մեկնաբանեցին իրենց պատկերացումներն, այնուհետև սեմինարավարն արեց իր դիտարկումները:

6-օրյա հանգստի ավարտին ամփոփեցին արդյունքները. առաջին հորիզոնականը զբաղեցրեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետը, երկրորդը՝ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետը և երրորդը՝ Կուլտուրայի ֆակուլտետը: Ֆակուլտետների մասնակիցներն ստացան հոբելյանական պատվոգրեր, իսկ առաջին տեղը զբաղեցրած ֆակուլտետի ուսանողների համար կկազմակերպվի արշավ՝ իրենց նախընտրած ուղղությամբ:

Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը վստահեցնում է. «Ուսանողական խորհրդի համար 2024 թվականը հոբելյանական և նշանակալից տարի է լինելու, արդեն 30 տարի է, ինչ խորհուրդը ծավալում է բազմաթվաճանաչում և ուսանողակենտրոն գործունեություն: Մանկավարժական համալսարանի ուսանողական խորհուրդը երիտասարդական սերունդներին համախմբելու լավագույն փորձ ունի: Այդ են վկայում տարբեր տարիների հաջողություններն ու ձեռքբերումները, որոնք շարունակական են լինելու»:

Կուլտուրայի ֆակուլտետի լրագրության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Ժենյա Աբգարյանը պատմում է. «Ուսման այս 5 տարիների ամենասիրելի ծրագրերից մեկն Աղավաճորում անցկացվող միջոցառումներն են: Մնալով մի հարկի տակ՝ մենք դառնում ենք մի ընտանիք, մտերմանում, ձեռք բերում նոր գիտելիքներ ու ընկերներ և ամրապնդում ունեցածի հիմքերը»:

Նույն բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Նատալի Մինասյանն անկեղծանում է, որ առաջին անգամ էր Աղավաճորի բազայում և սիրով է մասնակցում նմանատիպ ծրագրերի. «6-օրյա ձմեռային հանգիստն ընկերներ ձեռք բերելու, լավ ժամանակ անցկացնելու, մրցության խաղերի մասնակցելու հիանալի հնարավորություն է: Այսպիսի ծրագրերը թող շարունակական լինեն, որպեսզի ավելի շատ ուսանողներ կարողանան ընդգրկվել այս ծրագրում»:



որ Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ իրականացվող ծրագիրը լավ առիթ է անոռնանալի օրեր ունենալու և նոր ընկերներ ձեռք բերելու: Համալսարանի բոլոր ֆակուլտետներից ընտրված ուսանողներն Աղավաճորում անցկացրին 6 օր. դրանք հազեցած էին ուսումնաժամանակային ամենատարբեր ծրագրերով՝ ինտերակտիվ սեմինար-քննարկումներով, ինտելեկտուալ և սպորտային խաղերով, բեմականացումների և հոլովակների ներկայացումներով, երգ ու պարով:

Հանգստի առաջին օրը Ուսանողական խորհուրդը մասնակիցներին ներկայացրեց հանգստի անցկացման ծրագիրը, ոչ ֆորմալ ձևաչափով ուսանողները ծանոթացան միմյանց հետ: Արվեստականները, հաղթահարելով մի շարք փուլեր, մասնակցեցին ֆիլմաերեկոսի համար նախատեսված «Կինոման», գրքասերների՝ «Art In», տրամաբանական և Ուսանողական խորհրդին նվիրված «քուիզերին», սպորտլամոնային, գուշակեցին «քվեսթի» հանելուկային հարցերը, կրկնօրինակեցին հայտնի կտավները: Կազմակերպված խաղերի ընթացքում յուրաքանչյուր ֆակուլտետ ստացավ համապատասխան միավորներ:

Հանգիստը միայն ժամանցային չէր. Ուսանողական խորհուրդը մտածել էր

դիպման ընթացքում քննարկվեց ուսանող-բուհ հետադարձ կապի կարևորությունը:

Բազայում հյուրընկալվեցին «MAD learning space» կազմակերպության ներկայացուցիչները, որի տնօրեն Ռոզա Աբրահամյանը խոսեց անձնային բրենդի կարևորության մասին, ներկայացրեց CV կազմելու հիմնարար կետերը, պատասխանեց ուսանողների հարցերին: «Ձմեռային հանգիստ-2024» ծրագրի ընթացքում տրվեց նաև Ուսանողական խորհրդի 30-ամյակին նվիրված միջոցառումների մեկնարկը, և այդ առիթով հանդիպման հաջորդ և նշանակալից հատվածում Ուսանողական խորհրդի և «B2B Marketing» ընկերության միջև կնքվեց համագործակցության հուշագիր, որը կխթանի ուսանողների ներգրավվածությունը դասընթացների կազմակերպման, մասնակցության, նոր հմտությունների փոխանակման գործում: Ի դեպ, ՀՊՄՀ ուսանողները յուրաքանչյուր դասընթացի կարող են մասնակցել 20% զեղչով:

«Էթիկայի դպրոցի» տնօրեն Գևորգ Սկրտչյանն ուսանողներին ներկայացրեց ինչ է էթիկան և էթիկետը, խոսեց հաղորդակցման էթիկայի մասին, ուսանողներին ներկայացրեց իր փորձը, պատասխանեց հարցերին:

# Երազանքից՝ իրականություն

«Մանուկ հասակում ֆուտբոլային աշխարհի առաջնությունը նայելիս միշտ երազել են դառնալ այնպիսի ֆուտբոլիստ, ինչպիսին են Զիդանը, Ռոնալդոն, Նազարիոն, Ռոնալդինիոն. նրանք են իմ ոգեշնչման աղբյուրը»,- մեզ հետ զրույցում ասաց «ՆՈՒԱ» ֆուտբոլային ակումբի ֆուտբոլիստ Էդգար Մովսեսյանը:

Ֆուտբոլային կարիերան նա սկսել է դեռևս 5 տարեկանից՝ իր ծննդավայր Աչաջուրում:

«Եղբայրս իր հետ ինձ տանում էր մարզումների. երբ մարզիչը նկատեց ֆուտբոլային ունակություններս՝ ինձ հրավիրեց մարզվելու մեծահասակների խմբում»,-պատմում է ֆուտբոլիստը, հավելելով, որ այնքան մեծ է ֆուտբոլի համրեպ սերը, որ առանց գնդակի չի պատկերացնում իրեն:

Ֆուտբոլային հաջողությունները սկսել է լավագույն ակումբներից՝ Ուրարտուում: Ասում է. «Երբ Աչաջուրի թիմով Երևանում խաղացիմք Ուրարտուի դեմ, այդ խաղից հետո մարզիչներն ինձ հրավիրեցին իրենց ակումբ: Այսինքն, կարելի է ասել, որ ֆուտբոլային գիտելիքներիս ու հմտություններիս մեջ մեծ դեր է ու-



նեցել «Ուրարտու» ֆուտբոլային ակումբը»:

Էդգար Մովսեսյանի մարզական կարիերայում մեծ ներդրում ունեն նաև ծնողները, որոնք, մարզիկի խոսքով, ոգեշնչում են իրեն ցանկացած դժվարություն հաղթահարելով առաջ շարժվելու հարցում:

Ամենասիրելի ֆուտբոլիստն իր համար Զենդիխ Միխայրայանն է, որին համարում է ոչ միայն լավագույն ֆուտբոլիստ, այլև մեծագույն հայ, որը շատ բան է արել Հայաստանի համար:

«Հետևում են նաև Կրիշտիանո Ռոնալդուին, բայց կարծում եմ, որ յուրաքանչյուր մարդ պետք է ձգտի ստեղծել իր լավագույն կերպարը»,- զրույցի ընթացքում ասաց ֆուտբոլիստը:

Էդգարը սիրում է ազատ ժամանակ գրքեր կարդալ կամ երաժշտություն լսել, իսկ երեկոյան միայնակ զբոսնել կամ ընկերների հետ ժամանակ անցկացնել: Խոսելով դժվարությունների մասին՝ Էդգարը նշում է, որ ունեցել է բազմաթիվ խնդիրներ՝ սկսած վնասվածքներից, մինչև հոգեբանական տրավմաներ, սակայն համարում է, որ առանց դրանց մարդ չի կարող դառնալ ավելի ուժեղ. «Երբ դժվարություններ են ունենում՝ գիտեմ, որ դրանք պետք է պարզապես հաղթահարել, քանի որ մյուս կողմում արդեն հաղթանակի պտուղներն են»:

ԱՆՆԱ ԲԱԲԱԼԱՐՅԱՆ  
ՀՊՄՀ Լրագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանող